ԾՆՆԴՅԱՆ 110-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

# ՄԱՐԴԸ՝ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԵՌՎԻՑ



*Կորյուն Ազրոյանը «մանկություն չունեցող» հայ գրական մտավորականության այն ներկայացուցիչներից է, ովքեր անցյալ դարասկզբին, ծնվելով Արեւմտյան Հայաստանում, ենթարկվում են կոտորածների ու գաղթի անագորույն ալիքներին, վերաբնակվում Այսրկովկասում, մեծանում, կրթվում ու դաստիարակվում են խորհրդային կարգերի օրոք, եւ յուրաքանչյուրն ըստ կարելվույն իր լուման է ներդնում հայ գրական, մանկավարժական ու մշակութային կյանքի նորոգ վերընթացին:*

Կորյուն (ծննդյան կնքանունը Սիսակ) Ղազարի Ազրոյանը ծնվել է 1903 թվականի նոյեմբերի 7-ին, Բուլանըխի՝ պատմական Հարք գավառի Լիզ գյուղում: 1918-ին, փրկվելով կոտորածներից, եկել է Դիլիջան, ապա անցել Թիֆլիս եւ հաստատել մշտական բնակություն: Այստեղ սկզբում աշխատել է որպես կաշեգործ բանվոր, եւ այդ տարիներին էլ գրել է իր անդրանիկ բանաստեղծությունները՝ «Բանվոր Կորյուն» մականունով: 1926-ին ավարտել է Թիֆլիսի բանֆակը, իսկ 1932-ին՝ Մոսկվայի համալսարանի գրական-խմբագրական ֆակուլտետը: Վերադառնալով Թիֆլիս՝ աշխատանքի է անցել «Պրոլետար» օրաթերթի խմբագրությունում, սկզբում՝ գրական աշխատողի, այնուհետեւ բաժնի վարիչի պաշտոններով: 1932-33 թվականներին պատմություն եւ քաղաքատնտեսություն է դասավանդել Թիֆլիսի կաշեգործների ֆաբգործուսումնարանում: 1931 թվականին ընդունվել է ԽՄԿԿ շարքերը, իսկ 1934-ին ընտրվել ԽՍՀՄ գրողների միության անդամ: Նույն տարին նշանակվել է Ղարաքիլիսայի (այժմ՝ Վանաձոր) «Սոցարշավ», ապա՝ Արթիկի «Լեռնագործ» թերթերի խմբագիր: Այնուհետեւ տեղափոխվել է Թիֆլիս, աշխատել տեղի «Պրոլետար» օրաթերթի արվեստի եւ գրականության բաժնի վարիչ: 1930-ական թվականներին երկրորդ կեսին եղել է Վրաստանի պրոլետարական գրողների միության հայկական մասնաճյուղի քարտուղար, հետագայում, մասնավորապես, Հայրենական պատերազմի տարիներին՝ Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի նախագահ:

1940-ից մինչեւ կյանքի ավարտը Թիֆլիսի հայկական տարբեր դպրոցներում դասավանդել է հայոց լեզու եւ գրականություն, եղել է 88-րդ հայկական միջնակարգ դպրոցի տնօրենը: Վախճանվել է Թիֆլիսում, 1969 թվականի հոկտեմբերի 27-ին, 66 տարեկան հասակում:

Ավելացնենք նաեւ, որ նա գրական ստեղծագործական նախաքայլերը սկսել է բանաստեղծություններով, հետագայում անցել արձակի, հրատարակել է երեք գիրք՝ «Կանաչ ավանի մարդիկ» (պատմվածքներ, 1948), «Լեռան արշալույս» (վեպ, պատմվածքներ, 1958), «Սպիտակ արծվի երգը» հայերենից վրացերեն թարգմանված պատմվածքների ժողովածուն (1969):

Գեղարվեստական ստեղծագործություններից բացի, Կ.Ազրոյանը զբաղվել է նաեւ գրական եւ թատերական քննադատությամբ: Բնավորությամբ լինելով ազնիվ, շիտակ, ուղղամիտ ու ուղղադատ՝ նա գրական երկերի եւ թատերական բեմադրությունների նկատմամբ միշտ էլ առաջնորդվում էր գեղագիտական ու քաղաքացիական բարձր պահանջներով եւ իր խիստ սկզբունքային դիրքորոշմամբ հաճախ ճիշտ կողմնորոշումներ էր տալիս գրական ու թատերական հասարակության կարծիքին: Արձակագիր Բենիկ Սեյրանյանը միանգամայն ճիշտ ու դիպուկ է բնութագրել Կ.Ազրոյանին՝ նրան համարելով «Մեր (վիրահայ-Ս.Հ.) գրական կյանքի աղը»:

Հիրավի, Հայրենական պատերազմի տարիներին, մասնավորապես՝ 1942-1946 թվականներին, երբ Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղը ղեկավարում էր Կ.Ազրոյանը, ես, լինելով դպրոցական պատանի, հաճախ էի ներկա գտնվում մասնաճյուղի պարբերաբար գումարվող գրական ասուլիսներին ու քննարկումներին, ուր եւ ստացա իմ գրականագիտական անդրանիկ փորձառությունը: Այդ քննարկումների հորձանուտում էր միշտ գտնվում Կ.Ազրոյանը, որը ոչ միայն իբրեւ ղեկավար ընթացք եւ ուղղություն էր տալիս գրական այդ երեկոներին, այլեւ իր անաչառ, սկզբունքային ելույթներով, սուր վիճաբանություններով, իսկապես համ ու հոտ էր հաղորդում այդ բանավեճերին: Իհարկե, լինում էին նաեւ նրա սուր ելույթներից նեղացածներ ու վիրավորվածներ, սակայն քաջածանոթ լինելով Կ.Ազրոյանի ազնիվ ու անխարդախ խառնվածքին, շուտով մոռացության էին մատնում այդ, բայց եւ զգուշանում ու առավել շրջահայաց էին գտնվում իրենց հետագա ստեղծագործական անելիքներում:

Գրաքննադատ Կ.Ազրոյանն առաջիններից մեկն էր, որ, բարձր գնահատելով Հովի.Շիրազի «Գարնանամուտ» անդրանիկ ժողովածուն, հանձին նրա, նկատեց ապագա մեծ բանաստեղծին: Շուրջ երեք տասնամյակ գլխավորելով Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղը՝ Կ.Ազրոյանը մեծապես նպաստել է Հայաստանի եւ Վրաստանի գրողների մերձեցմանը, նրանց ստեղծագործությունների փոխադարձ ճանաչմանն ու պրոպագանդմանը: Նրա գործուն ջանքերի շնորհիվ, արտասահմանից նոր վերադարձած Ավ.Իսահակյանը 1939-ին հրավիրվում է Վրաստան, արժանանում հայ եւ վրաց մտավորականների ջերմ ընդունելությանը: Ոգեւորված փառահեղ ընդունելությունից՝ Վարպետը հետագայում իր հուշերում մեծ ջերմությամբ է վերհիշում այդ սքանչելի օրերը: Վարպետի պատվին տրված հանդիսավոր ճաշկերույթներից մեկը տեղի է ունենում Կ.Ազրոյանի հյուրընկալ օջախում, հայ եւ վրաց գրական-մտավորական ընտրանու մասնակցությամբ:

Կորյուն Ազրոյանը նաեւ հմուտ, բարեխիղճ եւ հոգատար մանկավարժ էր: Երկար տարիներ հայոց լեզու ու գրականություն դասավանդելով Թիֆլիսի հայկական դպրոցներում՝ նա իրավամբ վայելում էր աշակերտների եւ ծնողների սերն ու խորին հարգանքը:

Ցավոք, ինձ բախտ չի վիճակվել լինել նրա աշակերտը, բայց իմ մտերիմներից եւ ծանոթներից, ովքեր աշակերտել կամ ճանաչել են նրան, միշտ էլ ջերմության ու գորովանքի խոսքեր եմ լսել Ազրոյան մանկավարժի եւ ուսուցչի բարձր արժանիքների մասին:

Եվ այսօր, այս երկար ու ծիգ տարիների հեռվից վերհիշելով Թիֆլիսի 1940-ական թվականների գրական եւ թատերական կյանքի ալեբախումները, շատ նվիրական անձանց ու գործիչների միջավայրում ուրվագծվում եւ վերակենդանանում է արտաքուստ հասարակ ու համեստ, բայց ներքուստ հոգու աննկուն ավյունով լեցուն, վերլուծական սուր մտքով օժտված Կորյուն Ազրոյանի ազնիվ եւ անկաշառ կերպարը: Թող հավերժ օրհնյալ լինի նրա անմոռաց հիշատակը:

*ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

*ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ*

ԿՐԹԱԿԱՆ

# ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄԸ ՉԻ ՎԵՐԱՑՎՈՒՄ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, այս տարի մանկավարժների հավաստագրման քննություններն աչքի ընկան բավականին ցածր արդյունավետությամբ: Բավական է նշել, որ միայն տարրական մակարդակի ուսուցիչների 93,5 տոկոսը չկարողացավ հաղթահարել իմացության նվազագույն մակարդակը:***



Վերոնշյալի, ինչպես նաեւ հավաստագրման քննությունների ծրագրման ու անցկացման, կազմակերպչական եւ քննական թեստերի պատրաստման գործում թույլ տրված որոշ բացթողումների հաշվառմամբ, ծագեց ենթադրություն, ըստ որի, հավաստագրման քննությունները հնարավոր է վերացվեն, թեպետ այդ ենթադրությունը կտրականապես հերքվեց քննությունների ազգային կենտրոնի կողմից: Վերոնշյալ ենթադրությունը չհաստատեցին նաեւ Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունում: Ավելին, կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեի հայտարարությամբ, ուսուցիչների հավաստագրումը չի կարող լինել գնահատման միակ միջոցը:

Հիշեցնենք, որ ուսուցիչների հավաստագրման քննություններն առաջին անգամ անցկացվեցին 2010 թվականի ամռանը: Այն ժամանակ, կրթության եւ գիտության նախաձեռնությամբ մշակված եւ խորհրդարանի կողմից ընդունված օրենքի համաձայն, 2014 թվականի համար բոլոր ուսուցիչները պետք է անցնեն հավաստագրում, հակառակ դեպքում, նրանք որպես ուսուցիչներ չեն աշխատի:

«Առկա սխեման շատ վատ էր ծրագրված, եթե հետեւեինք դրան, ապա 2015 թվականի համար ուսուցիչների լուրջ պակասորդ կունենայինք, ինչը կհանգեցներ դպրոցների փակման: Դրա ակնհայտ վկայությունը այս տարվա հավաստագրման քննություններն են: Հաշվի առնելով դա՝ մշակեցինք հիմնադրույթ, որով փոխարինելու ենք ուսուցիչների հավաստագրման գործընթացը: Գնահատման համակարգը, որը մտադիր ենք ներդնել, կլինի բազմաբնույթ: Մոտ օրերս ձեռնամուխ կլինենք այդ համակարգի քննարկմանը»,- հայտարարեց Թամար Սանիկիձեն:

Կրթության նախարարի հավաստմամբ, հավաստագրման քննություններն անպայմանորեն ձեւափոխվելու են, եւ ներդրվելու է համալիր գնահատում: «Մոտ ժամանակներս Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորված հետազոտություններ կանցկացնենք, ըստ որի, մշակելու ենք այլընտրանքային մոդելը: Թեպետ հետազոտությունը, որը անցկացնում է քննությունների ազգային կենտրոնը, կլինի վերջնական, եւ սխեման, որը մենք կառաջարկենք մանկավարժներին, բոլորի համար կլինի պարտադիր: Բոլոր մանկավարժներին կընձեռենք զարգացման հավասար հնարավորություններ»,- ընդգծեց նախարարը:

Պարզաբանումների համար, թե ինչպես է իրականացվելու ուսուցիչների գիտելիքների գնահատումը, եւ ինչ նորամուծություններ են ներդրվելու այդ գործընթացում, մենք դիմեցինք քննությունների ազգային կենտրոնի տնօրեն Մայա Միմինոշվիլուն:

«Միանգամից ասեմ, որ հավաստագրման քննությունների վերացման վերաբերյալ խոսակցությունները իրականությանը չեն համապատասխանում: Օրենքի այն կետը, ըստ որի, 2014 թվականին բոլոր ուսուցիչները պետք է հավաստագրված լինեն, մնում է անփոփոխ: Եվ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ 2010 թվականից հետո ուսուցիչների հավաստագրման քննությունների երկու բաղադրիչները հաջողությամբ հանձնել է ընդամենը 12 տոկոսը, ապա ստացվում է, որ ներկայումս գործող մանկավարժների 88 տոկոսը հնարավոր է մնա առանց աշխատանքի:

Ուղղակի ակնհայտ դարձավ հավաստագրման քննությունների մոդելի անարդյունավետությունը, եւ դրանում փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը, թեպետ մենք նախօրոք նշում էինք, որ վերոնշյալ օրենքում սահմանված ժամկետները անիրատեսական էին»,- ասաց քննությունների ազգային կենտրոնի ղեկավարը:

Ի պատասխան այն հարցին, թե կրթության ու գիտության նախարարությունը եւ քննությունների ազգային կենտրոնը ի՞նչ են ձեռնարկելու ստեղծված իրավիճակի կարգավորման համար, Մայա Միմինոշվիլին հայտարարեց. «Միանգամից նշեմ, որ միայն տեսական գիտելիքների գնահատումը մենք երբեք բավարար չենք համարել: Տվյալ պարագայում առանձնակի նշանակություն ունի մանկավարժի պրակտիկ իմացությունը, թե ինչպես է նա կարողանում դասավանդելիք առարկան հասցնել աշակերտներին, թեպետ հենց այդ կարեւոր բաղադրիչը մինչ օրս մնում էր գնահատման ոլորտից դուրս:

Մենք ծրագրում ենք թեստավորմանն ու հարցազրույցին ավելացնել երրորդ բաղադրիչը՝ գործնական իմացության մակարդակի ստուգումը: Մենք այժմ աշխատում ենք այն ուղղությամբ, որ ուսուցիչները գնահատվեն՝ ելնելով պրակտիկ գործունեությունից: Թեպետ ուսուցիչների ինչպես տեսական, այնպես էլ՝ գործնական գնահատման մեթոդների, մանկավարժների մասնագիտական զարգացման արդյունավետության դրույթի մշակումն ու ներդրումը լրիվությամբ կրթության եւ գիտության նախարարության իրավասությունն է»,- հայտարարեց Մայա Միմինոշվիլին:

Քննությունների ազգային կենտրոնի ղեկավարն անդրադարձավ նաեւ ընթացիկ տարվա աշնանը հանրային դպրոցներում ավարտական դասարանների աշակերտների ատեստացիոն քննությունների արդյունքներին:



Ինչպես հայտնի է, ավարտական ութ քննությունների հանձնումը բաժանվեց երկու փուլի եւ աշակերտներին տրվեց ընթացիկ տարվա աշնանը եւ հաջորդ տարվա գարնանը չորսական քննությունների հանձնմամբ, հասունության վկայական ստանալու հնարավորություն:

Թեպետ նշենք, որ նորամուծության անդրանիկ փորձարկումն իրեն այնքան էլ չարդարացրեց: Ընթացիկ տարվա աշնանային ավարտական քննություններին աշակերտների 33 տոկոսը չհաղթահարեց իմացության նվազագույն մակարդակը: Դա առանձնապես զգալի էր ֆիզիկայի քննության ժամանակ, որի ընթացքում մասնակիցների շուրջ 15 տոկոսը չկարողացավ հաղթահարել նվազագույն իմացության մակարդակը: Մյուս առարկաների հարցում, մասնավորապես՝ աշխարհագրության քննությունից, կտրվեցին աշակերտների 7 տոկոսը, կենսաբանությունից՝ 5, քիմիայից՝ 6 տոկոսը: Թեպետ, օրենքը նախատեսում է նաեւ որոշակի արտոնություն. այն աշակերտները, ովքեր վերոնշյալ առարկաներից թեկուզ մեկը չեն հանձնել, հնարավորություն ունեն մյուս չորս առարկաների հետ, այն վերահանձնել մայիսին:

«Այն, որ աշակերտների 15 տոկոսը չի հաղթահարել ֆիզիկայի իմացության նվազագույն մակարդակը, ըստ իս, աղետալի չէ, թեպետ, ինչ խոսք, շատ ավելի լավ կլիներ, եթե բոլորը կարողանային քննությունը հաջողությամբ հանձնել: Սակայն, ներկայումս առավել նշանակալի է, թե ֆիզիկայի եւ, ընդհանրապես, մյուս առարկաների ուսուցիչները կոնկրետ ինչ են ձեռնարկում իրավիճակի կարգավորման համար: Իսկ այն, որ այդ ուղղությամբ կոնկրետ քայլերի կատարումն անհրաժեշտություն է, ակնհայտ է»,- հայտարարեց Մայա Միմինոշվիլին:

Նա հավելեց, որ տվյալ պարագայում հարցը բարդանում է նաեւ նրանով, որ այս տարվա տվյալները հնարավոր չէ համեմատել նախորդ տարիների, մասնավորապես՝ անցյալ տարվա տվյալների հետ: «Ցավոք, համեմատել չենք կարող, քանի որ անցյալ տարի աշակերտների համար գլխավորը երեք առարկաների քննություններին 5,2 միավորի հաղթահարումն էր: Չափորոշիչները այլ էին, պակաս էր նաեւ իմացության մակարդակը»,- ասաց նա:

Քննությունների ազգային կենտրոնի տնօրենի խոսքերով, շատ հարցերի պատասխանը կհստակեցվի հաջորդ տարվա գարնանը, երբ շրջանավարտները կներկայանան ավարտական հերթական քննություններին:

Հիշեցնենք, որ ավարտական քննություններն այսպես կոչված ԿԱՏ-ի, այն է՝ համակարգչային թեստավորման միջոցով, առաջին անգամ անցկացվեցին 2011 թվականին: Այն ժամանակ դպրոցները ավարտական քննություններն անցկացրին ինքնուրույն, առանց քննությունների ազգային կենտրոնի միջամտության:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*

Ð²ðò – ä²î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Üºð

ÐÚàôð²êÆðàôÂÚàôÜ

## ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐ



***Հաճախ նկատողություն եմ ստանում, որ հյուրերին լավ չեմ դիմավորում: Անկեղծ ասած, չեմ կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ եմ սխալվում: Գույե օգնե՞ք ինձ:***

***Ն.Տ.***

***Ախալցիխե***

Մի հին ասացվածք կա. «Ով հյուր չի գնում եւ չի հրավիրում, նա բարի չի լինում»: Բայց ինչպե՞ս պետք է հյուրերին ընդունել: Հիշեցնենք մի քանի կանոններ: Հյուրերին հրավիրելով ճաշի կամ ծննդյան տոնակատարության` աշխատեք բոլորին մոտավորապես միաժամանակ տեղեկացնել: Հակառակ դեպքում, նա, ով հրավերը մյուսներից ուշ ստանա, կարող է մտածել. «Գուցե ինձ այն պատճառով են կանչել, որ ինչ-որ մեկը չի կարողացել գալ»:

Տանտերերը պետք է հավասարապես ուշադիր լինեն բոլոր հյուրերի նկատմամբ: Բացառություն կարող են լինել միայն ամենատարեցը եւ տվյալ շրջապատում նորեկը:

Լավ տանտիրուհին մի պարզ ճշմարտություն պետք է իմանա. ոչ մի հյուր չի ուտելու հնարավորից տասն անգամ ավելի, հետեւաբար, կարիք չկա անդադար վազվզել դեպի խոհանոց եւ հակառակ ուղղությամբ: Դրա փոխարեն, պետք է հանգիստ նստել հյուրերի հետ, հյուրասիրել, հետեւել, որ ոչ մեկը չձանձրանա, որ սեղանի շուրջ զրույցն ընդհանուր լինի:

òðì²ÌàôÂÚ²Ü ²Êî²ÜÆÞ

## ԳԵՐԱԿՏԻՎ ԵՐԵԽԱ



***Երեխաս անընդմեջ գտնվում է շարժման մեջ, անհանգիստ է, եւ այդ ամենի հետ միասին, նկատվում է որոշակի ցրվածություն: Չգիտեմ` ինչպե՞ս վարվել:***

***Ե. ԵՐԱՆՈՍՅԱՆ***

***Թբիլիսի***

Հետաքրքիր է, որ ըստ հետազոտությունների արդյունքների, երեխաների գերակտիվության եւ ցրվածության ախտանիշն ավելի հաճախ դրսեւորվում է բաց գույնի մազեր եւ երկնագույն աչքեր ունեցողների եւ գրեթե 5 անգամ ավելի` տղաների, քան աղջիկների շրջանում: Ինչո՞ւ: Թերեւս բնությունը, աղջիկներին ստեղծելիս, հոգ է տարել, որ նրանք նույնիսկ մոր արգանդում ավելի դիմացկուն լինեն, քան տղաները:

Գերակտիվության եւ ցրվածության ախտանիշի ամենատարածված պատճառներից են հղիության ընթացքում մոր վնասվածքները, տարած վարակները, թունավորումը եւ այդ ժամանակահատվածում ընդունած դեղերի ազդեցությունը, ինչպես նաեւ բնապահպանական իրավիճակի ընդհանուր վատթարացումը: Ինչպե՞ս է դրսեւորվում գերակտիվությունը: Այդպիսի երեխաներին բնորոշ է անդադար անհանգիստ շարժման մեջ գտնվելը, ուշադրության կենտրոնացման հարցում դժվարությունը, անվերահսկելի վարքագիծը:

Ասում են, որ երեխաների համար ավելի օգտակար բան չկա, քան մայրիկի քնքուշ ձեռքերի հպումը: Օրվա մեջ թեկուզ 15 րոպե գտեք փոքրիկի հետ առանձնանալու եւ քնքշանքի նման պահեր պարգեւելու համար:

Երեխային հնարավորություն ընձեռեք իր ուժերը գործունեության տարբեր ասպարեզներում փորձելու համար:

Օրինակ, սկզբի համար լավ կլինի, եթե փոքրիկին առաջարկեք նկարել: Նրան ներկեր, մատիտներ, ֆլոմաստերներ տվեք: Սովորական ալբոմների փոխարեն, կարող եք պաստառ կամ պլակատ վերցնել, երեխայի հասակի բարձրությամբ կախել պատից: Բոլորին է հայտնի, որ փոքրիկները շատ են սիրում պատերին նկարել, ուրեմն թողեք, որ նա դա անի: Նկարված պլակատը կարելի է հանել եւ տեղը նորը կախել: Ճիշտ կլինի նկարները դեն չնետել: Պատկերացրեք, թե ձեր երեխան որքան ուրախ կլինի` դրանք տեսնելով մի քանի տարի անց:

Խուսափեք անդադար դիտողություններից, փոքրիկի գործունեությանն անընդհատ միջամտելուց:

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՄԹԵՐՔՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՎՆԱՍԱԿԱՐ ԵՆ ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Ներկայացնում ենք այն մթերքները, որոնցից կարող է վնասվել ձեր ատամների էմալը, ու դրանք կարող են կորցնել ճերմակությունը:*

**1. Կոկա-կոլա**

Այս ըմպելիքը ձեր ատամների առաջին թշնամին է: Բացի այն, որ դրանում մեծ քանակությամբ շաքար կա, գազավորված այս ըմելիքը պարունակում է նաեւ բազմաթիվ թթուներ, որոնք քայքայում են ատամի էմալը:

**2. Սուրճ**

Սուրճի սիրահարներն ամենաշատն են տանջվում ատամների դեղին գույնից: Բացի այդ, սուրճի հաճախակի օգտագործումը քարեր է առաջացնում ատամների վրա: Եթե ամեն անգամ, սուրճ խմելուց հետո, չողողեք ձեր բերանը, ապա, վաղ թե ուշ, այլեւս ոչ մի սպիտակեցնող միջոց չի փրկի ձեզ դեղին ատամներից:

**3. Ցիտրուսային մրգեր**

Թթուները, որոնք պարունակում են ցիտրուսային մրգերը, նույնպես քայքայում են ատամի էմալը:

**4. Շոկոլադ**

Քաղցրակերներին դեռ մանկուց զգուշացնում են, որ շոկոլադն ատամների թշնամին է: Եվ իսկապես, դրանում շաքարի հսկայական պարունակությունը նպաստում է կարիեսի առաջացմանը:

**5. Գինի**

Գինին նույնպես պարունակում է թթուներ, որոնք քայքայում են ատամի էմալը: Բացի այդ, օրինակ` կարմիր գինին, փոխում է ձեր ատամների գույնը:

ՎԱՐԿԱԾ

# ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՀԱՅՏՆԻ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑՆԵՐԸ

**(Սկիզբը` նախորդ համարում)**

Մեր ցուցակի հինգերորդ տեղն է գրավում եւս մեկ հայտնի հոլանդացու գլուխգործոցը` Ռեմբրանդ վան Ռեյնի «Դանայան»` հիմնված



հին հունական էպոսի վրա, ըստ որի, գլխավոր աստվածը` Զեւսը, իր սիրեցյալի մոտ է գալիս ոսկյա անձրեւի տեսքով: Այս նկարը Ռեմբրանդը սկսել է նկարել դեռեւս 1636 թվականին, գրեթե միանգամից Սասկիա վան Էյլենբրյուխի հետ ամուսնությունից հետո: Նկարիչը քնքշորեն սիրում էր իր կնոջը եւ հաճախ էր պատկերում նրան իր գործերում: Բացառություն չէր նաեւ «Դանայան», որը Ռեմբրանդը նկարել էր ոչ թե վաճառքի, այլ իր սեփական տան համար: Երկար ժամանակ գաղտնիք էր այն փաստը, թե ինչու էր նկարին պատկերված կինը ոչ այնքան նման Սասկիային, ինչպես նկարչի այլ ստեղծագործություններում: Միայն համեմատաբար վերջերս` XX դարի կեսին, հաջողվել էր գտնել այդ գաղտնիքի պատասխանը ռենտգենոսկոպիայի միջոցով: Պարզվել է, որ նկարը փոփոխվել է նկարչի կնոջ մահից հետո` 1642 թվականին, այն ժամանակ, երբ նա գտնվում էր ինտիմ հարաբերության մեջ Գերտյե Դիրքսի հետ: Ուստի, Դանայայի դիմագծերը ձեւափոխվել են այնպես, որպեսզի համատեղեն նկարչի երկու սիրեցյալների դիմագծերը:

Չորրորդ տեղին է արժանանում Վերածննդի ժամանակաշրջանի ամենաքնքուշ նկարչի վրձնի աշխատանքը` Սանդրո Բոտիչելլիի «Վեներայի ծնունդը»: Այս նկարի



ստեղծման ժամանակ վարպետը տարվել էր հին հունա-հռոմեական դիցաբանությամբ: Նկարին պատկերված է մերկ աստվածուհին, որը լողում է դեպի ափը բացված խեցիի վրա կանգնած, իսկ կողքից քամին է փչում: Նկարի ձախ կողմում իր տիկնոջը` Խլորիդային գրկած, Զեփյուռը փչում է խեցու վրա` ստեղծելով ծաղիկներով զարդարված քամի: Ափին աստվածուհուն է դիմավորում գրացիաներից մեկը:

Մեր ցուցակի առաջատարների եռյակն է բացում Վերածննդի եւս մեկ խոշորագույն ներկայացուցիչ Ռաֆայել Սանթիի «Սիքստինյան Տիրամայրը», որը գտնվում է Դրեզ-



դենի Հին վարպետների պատկերասրահում 1754 թվականից: Այս հսկայական կտավն ստեղծվել է Ռաֆայելի կողմից Պյաչենցայի Սուրբ Սիքստի մենաստանի եկեղեցու համար Յուլի II Պապի պատվերով: Հիփոթեզներից մեկի համաձայն, նկարը ստեղծվել է 1512-1513 թվականներին ֆրանսիացիների հանդեպ տարած հաղթանակի կապակցությամբ, որոնք ներխուժել են Լոմբարդիա իտալական պատերազմների ժամանակ, երբ Պյաչենցան ընդգրկվել է Պապական պրովինցիայի կազմում: XVIII դարում տարածվել է մի առասպել, որի համաձայն, Յուլի II-ը պատվիրել է կտավը իր դամբարանի համար, իսկ որպես Տիրամոր բնորդուհի հանդես է եկել Ռաֆայելի սիրեցյալը` Ֆորնարինան, որպես Սիքստի բնորդ` հենց Պապը, ով Սիքստ IV-ի եղբորորդին էր, իսկ Սուրբ Վարվառային` նրա եղբոր դուստր Ջուլիա Օրսինին: Այդ հիփոթեզի կողմնակիցները մատնանշում են այն փաստը, որ Սիքստի հագուստի կաղինները ակնարկում են Դելլա Ռովերե տոհմի հենց այդ երկու Պապերի մասին (rovere նշանակում է «կաղնի»):

Երկրորդ տեղում է գտնվում Վերածննդի հերթական մեծ վարպետ Միքելանջելոն Սիքստինյան կապելլայի առաստաղին կատարած



իր որմնանկարների շարքով: Այդ բացառիկ գլուխգործոցն ստեղծվել է 1508-1512 թվականներին: Միքելանջելոյին, ով իրեն համարում էր առաջին հերթին քանդակագործ, այլ ոչ թե նկարիչ, դեռ չէր վիճակվել կատարել այդ աստիճանի հսկայական աշխատանք որմնանկարի տեխնիկայում, եւ վարպետը կատարեց այդ գործը ռեկորդային կարճ ժամանակահատվածում բոլորովին մենակ:

Կանացիության հավերժ գաղտնիքը եւ հավերժական կանչը թաքնվել են Լուվրում գտնվող Լեոնարդո Ջոկոնդայի ժպիտի մեջ, ով



գրավում է մեր ցուցակի պատվավոր առաջին տեղը: Այդ դիմանկարի ստեղծման ժամանակահատվածը ընկած է 1503-1505 թվականների միջեւ, եւ համալրվել է մի շարք առասպելներով: Վարկածներից մեկի համաձայն, «Ջոկոնդայի»կամ «Մոնա Լիզայի» բնորդուհին Ֆլորենցիայից մետաքսի առեւտրով զբաղվող Ֆրանչեսկո դել Ջոկոնդայի կինը` Լիզա Գերարդինին է, իսկ մյուսի համաձայն, վարպետը նկարել է ինքն իրեն:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Ժողովուրդը միշտ առաջնորդի պետք ունի:

***ԾԵՐԵՆՑ***
***(1822-1888)***
***Հայ գրող***

Հաջող դաստիարակության գաղտնիքը աշակերտին հարգելու մեջ է:

***ԷՄԵՐՍՈՆ***
***(1803-1882)***
***Ամերիկացի փիլիսոփա***

Սերը սահման չունի:

***ԻԽԱՐԱ ՍԱՅԿԱԿՈՒ***
***(1642-1693)***
***Ճապոնացի գրող***

Երբ բանականությունը մեզ թողնում է անգիտության մեջ, ստիպված տրվում ենք պատահմունքի կամքին:

***ՍԵՆԵԿԱ***
***(մ.թ.ա. 4-մ.թ. 65)***
***Հռոմեացի փիլիսոփա***

Առողջ մուրացկանը հիվանդ թագավորից երջանիկ է:

***ՇՈՊԵՆՀԱՈՒԵՐ***
***(1788-1860)***
***Գերմանացի գրող***

Քո կյանքի բոլոր մարդկանց եւ բոլոր իրադարձությունները դու ինքդ ես շուրջդ հավաքել: Հիմա պետք է որոշես, թե ինչպես ես վարվելու նրանց հետ:

***Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

²ÜºÎ¸àîÜºð

** Աշխատողը 200 լարի պակաս աշխատավարձ է ստանում եւ դիմում է հաշվապահին.*

*- Դուք ինձ 200 լարի պակաս եք տվել:*

*- Ամեն ինչ ճիշտ է,- ասում է հաշվապահը,- անցած անգամ, երբ Ձեզ 200 լարի ավել էին տվել, ինչո՞ւ լռեցիք:*

*- Մեկ անգամ սխալվեցիք` դրա վրա կարելի է աչք փակել, բայց երկրորդ անգամ արդեն շատ կլինի...*

** Մի անգամ հարկային տեսուչը բողոքում է իր գործընկերոջը.*

*- Ինչպիսի՞ անհասկացող հարկատու էր հանդիպել: Ես իրեն մի անգամ բացատրեցի, թե ինչպես պետք է լրացնել հայտարարագիրը, նա չհասկացավ: Երկրորդ անգամ բացատրեցի` էլի չհասկացավ: Երրորդ անգամ բացատրեցի` ես հասկացա, ինքն էլի չհասկացավ...*

** Ուսուցիչը հարցնում է աշակերտին.*

*- Ինչպե՞ս կլինի «սիրել» բայի ապառնին:*

*- Ամուսնանալ:*

** Աղջիկը հարցնում է.*

*- Մայրիկ, հիշո՞ւմ ես այն չինական ծաղկամանը, որը մեր ընտանիքում սերնդից սերունդ է փոխանցվել:*

*- Իհարկե հիշում եմ: Ի՞նչ կա, որ:*

*- Ոչինչ, ուղղակի իմ սերունդն այդ ավանդույթին վերջ տվեց:*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿԿՈՂՄ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

*Նոյեմբերի 7-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ Իրաքի փոխվարչապետ Ռոշ Նուրի Շաուեյսի գլխավորած պատվիրակության հետ:*



Հանդիպմանը կողմերն անդրադարձան տնտեսական ոլորտում երկու երկրների համագործակցության խորացմանն ու ընդլայնմանը վերաբերող հարցերին: Զրուցակիցները համակարծիք էին, որ առաջին եւ բավականին գործնական այդ հանդիպումը կարեւոր նշանակություն ունեցավ նաեւ առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացման գործում, ինչի մասին է վկայում երկու երկրների միջեւ առեւտրաշրջանառության ծավալների կտրուկ աճը:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են փոխշահավետ մի շարք ոլորտներում համագործակցությունը խորացնելու ուղղությամբ հետագա աշխատանքները:

Հայաստանի եւ Իրաքի միջեւ նոյեմբերի 6-ին ստորագրվել է տնտեսական, առեւտրային, գիտական եւ տեխնիկական համագործակցության մասին համաձայնագիր: Երկկողմ ապրանքաշրջանառությունը գերազանցում է 50 միլիոն դոլարը:

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԾ ՆԻԿՈԼԱՅ ՌԻԺԿՈՎԻ ՀԵՏ

*Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը նոյեմբերի 6-ին ընդունել է ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի անդամ, ՀՀ Ազգային ժողովի եւ ՌԴ Դաշնային ժողովի միջեւ համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահ Նիկոլայ Ռիժկովին եւ նրա գլխավորած պատվիրակությանը, որը Հայաստանում է գտնվում միջխորհրդարանական հանձնաժողովի հերթական` 23-րդ նիստի անցկացման կապակցությամբ:*

Հանդիպմանը Սերժ Սարգսյանը բարձր է գնահատել միջխորհրդարանական հանձնաժողովի գործունեությունը եւ դրանում մեծապես կարեւորել հանձնաժողովի համանախագահ, հայ ժողովրդի վաղեմի բարեկամ Նիկոլայ Ռիժկովի անձնական ներդրումը:

Հանդիպման ժամանակ, Նիկոլայ Ռիժկովը ներկայացրել է միջխորհրդարանական հանձնաժողովի երեւանյան նիստի արդյունքները` արդիական եւ կարեւոր համարելով օրակարգի շրջանակներում քննարկված հարցերը, որոնք առավելապես վերաբերել են ՀՀ եւ ՌԴ միջեւ տրանսպորտային հաղորդակցության բարելավման խնդիրներին:

## ԱՏՈՄԱԿԱՅԱՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՈՍԱՆՔԱԶՐԿՎԵԾ



*Հայաստանում նոյեմբերի 2-ին գրանցված զանգվածային հոսանքազրկումը պայմանավորված էր Հայաստանի եւ Իրանի էներգահամակարգերի փոխհոսքերի մեկուսացմամբ:*

Այս մասին Ազգային ժողովում 2014թ. բյուջեի քննարկման ժամանակ տեղեկացրեց Հայաստանի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը: «Հայաստանն ամբողջովին հոսանքազրկվել էր, քանի որ ատոմակայանը գտնվում էր վերանորոգման եւ վերալիցքավորման փուլում: Դա տեխնիկական խնդիր էր, որը ծագել էր իրանական կողմի հետ: Հոսանքազրկման պատճառ դարձած վթարի պահին, Իրանից Հայաստան ներկրումը կազմել է շուրջ 200 մեգավատ, որը միանգամից մեկուսացվել է: Հայաստանում վթարի հետեւանքով 200 մեգավատի դիֆիցիտ է առաջացել, ինչի հետեւանքով խախտվել են պարամետրերը: Դրանից հետո, անմիջապես աշխատել է պաշտպանական համակարգը, ինչի հետեւանքով էլ համակարգն ամբողջությամբ անջատվել է»,- նշել է նախարարը: Մեծամորի ատոմակայանը ցանց պետք է մտնի նոյեմբերի 15-ին:

Իրանում շուրջ 2 րոպե հետո բոլոր պարամետրերը կարգավորվել են, եւ Հայաստանը կրկին միացել է այդ համակարգին: «Այդ ընթացքում մեզ մոտ բավական սպառիչներ անջատված էին: Եվ որպեսզի նյութական լուրջ ծախսեր պահանջող վթարներ չառաջանային, մենք համակարգն ամբողջովին հոսանքազրկեցինք, հետո աստիճանաբար սկսեցինք վերականգնել այն»,- ընդգծեց նախարարը:

## ԿՍՏՈՐԱԳՐՎԻ ԳԱԶԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

*Հայաստանի կառավարությունը վստահ է, որ ռուսական կողմը կսուբսիդավորի գազի դիմաց հայկական կողմի 160 միլիոն դոլարի պարտքը:*

Այս մասին Ազգային ժողովում անցկացվող քննարկման ժամանակ ասաց Հայաստանի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը: «Այս հարցում բավականին երկար քննարկումներ եղան, ռուսական կողմի հետ համաձայնության եկանք, սակայն հետո խնդիր կար իրավական ձեւակերպումների մասով դաշտը քննարկել եւ գալ համապատասխան փաստաթղթի ստեղծմանը»,- ասաց նախարարը:

Արմեն Մովսիսյանն ընդգծեց, որ փաստաթուղթն արդեն պատրաստ էր ստորագրման, երբ առաջ եկավ Մաքսային միությանը Հայաստանի անդամակցության հարցը, ինչի հետեւանքով ստորագրումը հետաձգվեց: «Այս պահին քննարկումները վերջնական փուլում են, եւ ես հույս ունեմ, որ մենք մինչեւ տարեվերջ կստորագրենք այդ համաձայնագիրը, որով ռուսական կողմը կսուբսիդավորի գազի դիմաց մեր պարտքը»,- նշեց նախարարը:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն եւ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ «Տրանսգազ» ՍՊԸ-ն այս տարվա մայիսին դիմեցին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով` առաջարկելով գազի սակագինը 132.000 դրամից բարձրացնել 221.000 դրամի: Հայաստանի կառավարությունը հայտարարեց, որ կգտնի աղբյուրներ եւ կսուբսիդավորի սակագնի 30 տոկոսը եւ բանակցություններ սկսեց ռուսական կողմի հետ, որպեսզի միջոցներ ներգրավի սուբսիդավորման համար:

## ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԱՐԱԳ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

*Հայաստանի Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Երեւանի Ստեփան Շահումյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցում մասնակցել է «Սիրիահայերի համար արեւելահայերենի եւ ռուսերենի անվճար դասընթացներ» ծրագրի բացման հանդիսավոր արարողությանը:*



Նոյեմբերի 4-ին կայացած միջոցառմանը նախարարն իր խոսքում ողջունել է ներկաներին եւ նշել, որ տարբեր ծրագրերով սիրիահայերը ինտեգրվել են հայաստանյան կյանքին, սակայն կարեւոր է լեզվի իմացությունը, հատկապես` արեւելահայերենի: Նախարարի խոսքով, Հայաստանում ապրելով ու աշխատելով, անհրաժեշտ է իմանալ նաեւ ռուսերենը, քանի որ դա կարեւոր է շփումների եւ ԱՊՀ տարածքի հայերի հետ համագործակցության համար: Հայաստանի Սփյուռքի նախարարությունը, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ, արդեն դասընթացների նպատակով ներգրավել է արեւելահայերենի 53 եւ ռուսերենի 60 սիրիահայ մասնակիցների, առանց տարիքային սահմանափակման: Ծրագրի բովանդակային մասն իրականացվում է Երեւանի քաղաքապետարանի եւ «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի հայաստանյան ներկայացուցչության հետ համատեղ, ֆինանսավորումն ապահովում է UNHCR-ը: Հետագայում նախատեսվում է կազմակերպել նաեւ անգլերենի դասընթացներ 200 սիրիահայի համար:

## ԲԱԽՈՒՄՆԵՐ` ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

*Հայաստանի ոստիկանությունը քրեական գործ է հարուցել նոյեմբերի 5-ին, ժամը 17.00-ին, Ազատության հրապարակում եւ Մաշտոցի պողոտայում տեղի ունեցած անկարգությունների փաստի առթիվ, երբ «Ցեղակրոն» կուսակցության ղեկավար Շանթ Հարությունյանն իր մի խումբ կողմնակիցների հետ, մահակներով ու ձողերով զինված, փորձել են երթ կատարել Ազատության հրապարակից:*

Ոստիկանության ներկայացուցիչները նրանց հորդորել են չխախտել հասարակական կարգը եւ ազատել Մաշտոցի պողոտայի երթեւեկելի հատվածը, սակայն նրանք գրպաններից հանել են ինքնաշեն պայթուցիկներ եւ գետնին հարվածելով` պայթեցնել, ապա մահակներով հարձակվել են իրենց կարգի հրավիրող ոստիկանների վրա: Ոստիկանական վերակարգերին հաջողվել է կարճ ժամանակում վերականգնել հասարակական կարգը:

Ոստիկանություն բերման է ենթարկվել 38 անձ:

Բերման ենթարկվածներից 20-ը ձերբակալվել են:

Միջադեպի ընթացքում, մարմնական վնասվածքներ են ստացել ոստիկաններ, որոնցից 4-ը ներկայումս ստացիոնար բուժման մեջ են:

Բերման ենթարկվածներից ու ձերբակալվածներից ոչ ոք մարմնական վնասվածք չի ստացել:

### ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴՆ ԸՆՏՐՎԵԼ Է ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

*Հարավային Կորեայի Բուսան քաղաքում անցկացվող Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 10-րդ համաժողովի նոյեմբերի 4-ի նիստին, համաժողովի պատվիրակների միաձայն քվեարկությամբ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսն ընտրվել է եկեղեցիների համաշխարային խորհրդի նախագահ: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին Մայր Աթոռի տեղեկատվական համակարգից, Ամենայն Հայոց կաթողիկոսը խորհուրդը կգլխավորի առաջիկա ութ տարիների ընթացքում: ԵՀԽ նախագահությունը բաղկացած է ութ անդամից:*
*ԵՀԽ նախագահների առաքելությունն է խրախուսել միջեկեղեցական եւ էկումենիկ հարաբերությունները, աշխարհում պաշտպանել մարդու իրավունքները, արդարությունն ու խաղաղությունը:*

### ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԿԱՅԱՆԱ ՆՈՅԵՄԲԵՐԻՆ

*Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը, երկամյա դադարից հետո, կհանդիպեն նոյեմբերին: Այս մասին հայտարարել են տարածաշրջան այցելած` ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները:*
*Համանախագահների հայտարարության մեջ նշվել է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովը (Ռուսաստան), Ժակ Ֆորը (Ֆրանսիա), Ջեյմս Ուորլիքը (ԱՄՆ) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկը նոյեմբերի 4-5-ին այցելել են տարածաշրջան: Նրանք հանդիպել են Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին Բաքվում, նոյեմբերի 4-ին, եւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին` Երեւանում, նոյեմբերի 5-ին, եւ քննարկել հակամարտության կարգավորման կարեւորագույն հարցեր:*
*Նրանք հանդիպել են նաեւ երկու երկրների արտաքին գործերի եւ պաշտպանության նախարարների հետ:*

### ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԴԱՌՆԱ ԱՆՎՃԱՐ

*Հայաստանում միջին մասնագիտական կրթությունը, որը ներառված է 12-ամյա կրթական համակարգում, 2014 թվականից անվճար կլինի բոլոր քաղաքացիների համար: Այս մասին տեղեկացրեց Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գագիկ Մինասյանը` խոսելով 2014 թվականի պետական բյուջեով սոցիալական ոլորտին արվող հատկացումների մասին:*
*Նա նշեց, որ քայլ է արվում նպաստել այն ընտանիքներին, որոնք չունեն համապատասխան միջոցներ` բարձրագույն կրթության տալու երեխաներին: 2014 թվականի պետական բյուջեով կրթության ոլորտի ֆինանսավորումը կաճի 12 տոկոսով:*

### ԿԳՈՐԾԻ ԲՋՋԱՅԻՆ ԿԱՊԻ ՉՈՐՐՈՐԴ ՕՊԵՐԱՏՈՐԸ

*Հայաստանի հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը միաձայն որոշեց «Յուքոմ» ՍՊԸ-ին Հայաստանի տարածքում հանրային շարժական կապի ծառայությունների մատուցման համար տրամադրել հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվություն` մինչեւ 2018թ. օգոստոսի 6-ը գործողության ժամկետով: Այդպիսով, Հայաստանում 2015թ. հունվարի 1-ից կգործի բջջային կապի չորրորդ օպերատորը:*
*Ինչպես ասաց «Յուքոմ» ՍՊԸ տնօրեն Հայկ Եսայանը. «Յուքոմ»-ը պարտավորվել է մեկ տարվա ընթացքում Երեւանում եւ հարակից հիմնական համայնքներում ապահովել լայնաշերտ անլար ինտերնետի ծածկույթ, երկու տարվա ընթացքում` Հայաստանի միջպետական մայրուղիների, ինչպես նաեւ բնակավայրերի առնվազն 80 տոկոսում:*
*Հայաստանում շարժական հեռախոսակապի ծառայություններ են մատուցում «Ղ-Տելեկոմ», «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» եւ «Օրանժ Արմենիա» ընկերությունները:*

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՆՈՅԵՄԲԵՐ



*11.11.2013. Անտիոքի Սուրբ Մելիտոս Հայրապետի, Մինաս Եգիպտացու եւ մյուս Մելիտոս եպիսկոպոսի, Բուրաս քահանայի եւ Շինու սարկավագի հիշատակության օր*

*12.11.2013. Հիշատակ Սուրբ Դեմետրիոս վկայի եւ Բասիլիսկոս քահանայի*

*14.11.2013. Սուրբ Գուրիասի, Սամունասի, Աբիբ սարկավագի, Ռոմանոս Մենակյացի, Մանուկ խոստովանողի եւ Հյուսիքոս զինվորի հիշատակության օր*

*16.11.2013. Հիշատակ Սուրբ Անդրեաս եւ Սուրբ Փիլիպպոս առաքյալների*

*17.11.2013. Բարեկենդան Հիսնակաց Պահոց*

Հիսնակը հիսունօրյա Պահքի շրջան է, որը նախորդում է Աստվածհայտնության տոնին: Հիսնակաց Բարեկենդանը 7 օրերի շարժականությամբ նշվում է նոյեմբերի 15-ից մինչեւ 21-ը, այս տարի՝ նոյեմբերի 15-ին:

## ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ

# «ՈՍԿԵ ԾԻՐԱՆԸ» ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

*Ջավախեթիում նոյեմբերի 8-11-ը «կինոտոն» է սպասվում. այստեղ կներկայացվի «Ոսկե ծիրան» 10-րդ միջազգային կինոփառատոնի ֆիլմերի ընտրանին:*

Ինչպես նշեց փառատոնի ղեկավար Հարություն Խաչատրյանը. «Ոսկե ծիրանը» միայն մեկ ամիս չի տեւում: Մենք ամբողջ տարի գործունեություն ենք ծավալում: Մինչեւ տարեվերջ շատ անելիքներ կան: «Ոսկե ծիրանը» կանցկացվի նաեւ Դոնի Ռոստովում եւ Մինսկում: Այս տարվա դեկտեմբերին նախատեսում ենք ցուցադրություններ կազմակերպել նաեւ Թբիլիսիում»:

«Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը Երեւանում տեղի ունեցող ամենամեծ մշակութային իրադարձություններից մեկն է: Հիմնվել է 2004 թվականին՝ «Ոսկե ծիրան» կինոյի զարգացման հիմնադրամի, Կինոգետների եւ կինոլրագրողների հայկական ասոցիացիայի կողմից:

«Քաղաքակրթությունների ու մշակույթների խաչմերուկ»՝ ահա «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի նշանաբանը հիմնման պահից ի վեր: Փառատոնն ամեն տարի ներկայացնում է 120-150 ֆիլմ՝ մրցութային եւ արտամրցութային տարբեր ծրագրերով:

## ՌԵԳԲԻ

# ՎԵՐԱԴԱՐՁՐԻՆ ՉԵՄՊԻՈՆԻ ԿՈՉՈՒՄԸ



Վրաստանի մինչեւ 19 տարեկանների ռեգբիի հավաքականը, մեկամյա ընդմիջումից հետո, վերադարձրեց Եվրոպայի չեմպիոնի կոչումը: Լիսաբոնում անցկացված եզրափակիչում վրաց պատանիները 32:6 հաշվով պարտության մատնեցին Բելգիայի հավաքականին:

Չեմպիոնի կոչման հետ միասին, Վրաստանի հավաքականը նվաճեց նաեւ աշխարհի պատանեկան առաջնությանը մասնակցելու ուղեգիրը: Այն կանցկացվի հաջորդ տարի Հոնկոնգում, եւ, Վրաստանի հավաքականի հետ միասին, դրան կմասնակցեն Ճապոնիայի, Կանադայի, Նամիբիայի, Տոնգիի, Ուրուգվայի, ԱՄՆ-ի եւ Հոնկոնգի հավաքականները:

## ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

# ՄԱՐՏՈՒՆԻ ԽԱՉՎԱՆՔՅԱՆ



«Վրաստան» թերթը ծանր կորուստ կրեց: 86 տարեկան հասակում կյանքից հեռացավ թերթի երկարամյա թարգմանիչ, ինտելեկտուալ հարուստ ներուժով օժտված անհատականություն, իր պատասխանատու եւ դժվարին գործի անշահախնդիր նվիրյալ Մարտունի Խաչվանքյանը, ով շուրջ կես դար աշխատեց թերթում, ծառայեց նրան եւ, շնորհիվ իր մտավոր բացառիկ հարուստ կարողությունների, բնավորության կիրթ ու բարեհամբույր խառնվածքի, սիրվեց-հարգվեց թերթի աշխատակիցների եւ վիրահայ համայնքի կողմից:

Մարտունի Խաչվանքյանը, ով սերում է տոհմիկ ախալցիխեցիների ընտանիքից, ծնվել է 1927 թվականին Հայաստանի Լոռու շրջանի Դսեղ գյուղում, որտեղ իր ծառայությունն էր կատարում նրա զինվորական հայրը՝ Վահանը: Հայրը մի քանի ամսից հետո ընտանիքի հետ վերադառնում է Ախալցիխե, որտեղ եւ անցնում են Մարտունի Խաչվանքյանի մանկության ու պատանեկության տարիները: 1945 թվականին նա ավարտում է Ախալցիխեի թիվ 3 հայկական դպրոցը, ապա ուսումնառության մեկնում Երեւան, ավարտում Երեւանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Այնուհետեւ ընդունվում է Երեւանի հեռակա մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը եւ, սովորելուն զուգընթաց, որպես աշխարհագրության ուսուցիչ, աշխատում Սեւան քաղաքում: Մանկավարժական գործունեությունը նա շարունակում է Թբիլիսիում, ուր բնակության է տեղափոխվում 1958 թվականին՝ աշխարհագրություն դասավանդելով տեղի ռուսական թիվ 64 դպրոցում (նա կատարելապես տիրապետում էր նաեւ ռուսերենին): Ահա հենց այս շրջանում էլ մանկավարժի աշխատանքը զուգահեռում է «Սովետական Վրաստան» թերթում թարգմանչի աշխատանքի հետ: 1969 թվականից արդեն Մարտունի Խաչվանքյանը անմնացորդ նվիրվում է թարգմանչի աշխատանքին մեր խմբագրությունում: Եվ ոչ միայն թարգմանչի, թերթի ընթերցողը նրան ճանաչում էր որպես բազմաթիվ ռեպորտաժների, ակնարկների, հետաքրքիր նյութերի հեղինակ: Եվ այսպես՝ շուրջ 45 տարի, գրեթե կես դար: Ու այս ընթացքում միայն սեր, հարգանք էր սփռում իր շուրջը եւ փոխադարձաբար ստանում այդ նույնը խմբագրության աշխատակիցներից:

Անհնար է պարզապես մոռանալ, որ նրան էինք դիմում ցանկացած հարցով. ասես քայլող հանրագիտարան լիներ՝ պատասխանում էր բոլոր հարցերին: Հապա սրամտությո՜ւնը, հապա նրա վարակիչ հումո՜րը, որով այնքան հիշեցնում էր իր մեծ հորեղբորորդուն՝ անվանի կատակերգակ-դերասան Կարպ Խաչվանքյանին: Ու այդպես մինչեւ վերջ, մինչեւ ընդամենը վերջերս, երբ ծանր հիվանդությունն, ավա՜ղ, «հաղթեց» նրան:

Մարտունի Խաչվանքյանը մեր բոլորի հիշողության մեջ վառ կմնա ոչ միայն որպես հիանալի գործընկեր, այլեւ որպես հիանալի ընտանիքի տեր անձնավորություն: Նա բացառիկ լավ ամուսին էր տիկին Լիդայի, հոգատար հայր՝ Վահանի ու Գայանեի համար, սիրասուն պապ՝ թոռների համար:

Հիմա, երբ արդեն վերջին հրաժեշտն ենք տվել մեր սիրելի ու խմբագրության ամենատարեց գործընկերոջը, մենք գլուխ ենք խոնարհում նրա թարմ հիշատակի առջեւ, նրա գեղեցիկ անվան ու գործի հանդեպ եւ ակամա հիշում Մեծն Թումանյանի իմաստուն պատգամը. «Գործն է անմահ լավ իմացեք, որ խոսվում է դարեդար, երնեկ նրան ով իր գործով կապրի անվերջ, անդադար»: Իսկ Թումանյանին նա շատ էր սիրում, հպարտ էր, որ աշխարհ էր եկել Դսեղում՝ Թումանյանի ծննդավայրում:

Մի քանի տարի առաջ մենք տոնեցինք նրա 80-ամյա հոբելյանը, մեր թերթում տպագրվեց հոդված՝ «Վրաստան» թերթի պարծանքը» վերնագրով: Հիրավի, թերթի պարծանքն էր նա, եւ ինչպես ասում են, վերջին մոհիկանը իր սերնդի այն եզակիներից, որոնք երբեք չեն կարող ջնջվել մեր հիշողությունից:

***«Վաստան» թերթի խմբագրակազմ***

«Վրաստան» թերթի խմբագրակազմը խորապես ցավակցում է Լիդա, Գայանե, Վահան, Վահրամ, Ռուդոլֆ Խաչվանքյաններին, Միքայել, Հովիկ, Լեւոն Պետրոսյաններին, նրանց սիրելի ամուսնու, հոր, եղբոր, աներոջ եւ պապի՝

*ՄԱՐՏՈՒՆԻ ԽԱՉՎԱՆՔՅԱՆԻ*

մահվան կապակցությամբ:

Վրաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը ցավակցում է դեսպանության աշխատակից Վահան Խաչվանքյանին հոր՝

*ՄԱՐՏՈՒՆԻ ԽԱՉՎԱՆՔՅԱՆԻ*

մահվան կապակցությամբ:



# ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Հայոց թագավոր: 8.Հարսանիքին հաջորդող քաղցր ամիս: 11.Լսողության օրգան: 12.Թբիլիսիի խամաճիկների տան վաղամեռիկ ... Դավթյան: 13.«Մեր հին սազի ողբանվագ ... լարն եմ սիրում»: 16.Քաղաք Սեւ ծովի ափին, Աջարիայի «սիրտը»: 17.Ոլոռազգի բույս: 18.Թբիլիսիում լույս տեսնող մանկապատանեկան լրագիր: 21.Վրացական ֆիլմ: 22.Որս բռնելու հարմարանք: 23.Հայկական հին ամսագիր: 24.Հայ անվանի դերասան ... Պետրոսյան: 29.Գետ Հարավային Ամերիկայում: 31.Գինու բաժակ: 32.Շախմատը այլ բառով: 37.Պետական պաշտոնյա: 39.Հայկական էպոսը՝ «Սասունցի ...»: 40.Գյուղի ժամացույցը: 41.Մուլտֆիլմի բանջարանոցային հերոս: 42.Ծննդյան վկայական:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Դեզդեմոնայի կորցրածը: 2.Գերմանացի բանաստեղծ: 3.Կրուժեւան հայերեն: 4.Թբիլիսիում գործող հայկական պարային խումբ: 5.Վրաց թագուհի: 6.Դ.Աղայան. «...ս գուլպա չունի»: 9.Հայ աղջկա անուն: 10.Մատուցարան, սինի: 14.Շրջան Վրաստանում: 15.Հայ ճանաչված թատերական գործիչ ... Ղազանչյան: 19.Տեր չունեցող: 20.Հայ գրող ... Շահնուր: 25.Ընկեր Մարգոյի աշակերտը: 26.Վրացական օպերա «... եւ Դալիլա»: 27.Փղի նախնին, որն անհետացել է: 28.Ֆիլմ ժան Մարեի մասնակցությամբ: 30.Անձնական դերանուն: 33.Զայնարկություն: 34.«Նա շատ ...ներ է կրել»: 35.Հայկական երաժշտական ֆիլմ: 36.Ուռենու դալար ճյուղերից մտրակ: 38.Հյուսնի գործիք:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Յունիսեֆ: 9.Արշավ: 10.Լիտր: 11.Բելգրադ: 13.Ամիգո: 16.Լեո: 17.Ռեդ: 19.Անդին: 22.Պրահա: 24.Չոչարա: 25.Արկղ: 27.Դասվար: 29.Ստադիա: 32.Աճպարար: 33.Ընձյուղ: 35.Անոխ: 37.Ամի: 39.Արենա: 40.Տհաս: 43.Լիր: 44.Գորի: 47.Նուտ: 49.Սուրմա: 50.Եվլե: 53.Փոկա: 54.Զոն: 55.Ավազ: 57.Նաեւ: 58.Դոնալդ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Մուծել: 2.Ռինգո: 3.Խելառ: 4.Նարա: 5.Իշլի: 6.Եվրո: 8.Ֆիդել: 12.Լենա: 14.Մանչ: 15.Գզիր: 18.Ծառա: 19.Աորտա: 20.Դարդանել: 21.Նանա: 23.Հավայի: 26.Կրադ: 28.Ակնա: 29.Սպի: 30.Արար: 31.Իրոնիա: 34.Զմերուկ: 36.Խար: 38.Տառւ: 41.Հնածեւ: 42.Ստենդ: 45.Ոսոխ: 46.Իրան: 48.Ալան: 51.Եվա: 52.Ազդ: 56.Ալ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge skype: VRASTAN-1920
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445